ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
STATE ACADEMY OF FINE ARTS OF ARMENIA

0009 Երևան, Իսահակյան 36, ՀՀ
36 Isahakyan str., 0009 Yerevan, RA

Հեռ./Tel.: (+374 10) 560726
Ֆաքս/Fax: (+374 10) 542706
Էլ. փոստ/E-mail: info@safa.am

N « 258 » 26.11 2024թ

«ՀՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ստեփանյան

Ի լրումն 2024 թվականի նոյեմբերի 13-ի պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցման՝ տեղեկացնում ենք, որ Պատվիրատուն «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի և «Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ-ի միջև 28.08.2024 թվականին կնքված թիվ ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-2024/09 պայմանագրի ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատշաճ ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Տեղեկացնում ենք նաև, որ Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ Հավելված 4.2 և Հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Կատարողին սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները (331,000 ՀՀ դրամ որակավորման ապահովում և 221,000 ՀՀ դրամ պայմանագրի ապահովում) փոխանցելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք ողջամիտ ժամկետում 2024 թվականի օգոստոսի 28-ին կնքված N ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-2024/09 պայմանագրի շրջանակներում ներկայացված՝ պայմանագրի ապահովման տուժանքի մասին համաձայնագրով և որակավորման ապահովման տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները փոխանցել վճարման պահանջագրերով սահմանված Պատվիրատուի /Շահառուի/ հաշվեհամարին, իսկ վճարման հանձնարարականների բնօրինակները ներկայացնել Պատվիրատուին:

Նշված առաջարկը կատարելու պարագայում Կատարողը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

Խնդրում ենք 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր դիրքորոշումը, Պատվիրատուի կողմից հետագա գործընթացը շարունակելու նպատակով:

ՌԵԿՏՈՐ՝ **ՎԱՐԴԱՆ ԱԶԱՏՅԱՆ**

Կատ.՝ Փ. Խաչատրյան
Հեռ.՝ 010 – 58 – 07 - 54